«ՌԻՍԱԼԵ»-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոչի Բեյի «Ռիսալե»-ում արծարծված հարցերը, հեղինակի տված տեղեկությունները և նրա դատողությունները վերաբերում են XVII դարի Թուրքիայի պետական-վարչական, սոցիալ-տնտեսական հարցերին, որոնք կարող են որոշակի պատկերացում տալ նաև հայ և հարևան ժողովուրդների կյանքի պայմանների մասին, մանավանդ, որ Կոչի Բեյը խիստ քննադատության է ենթարկել Օսմանյան Թուրքիայում ժողովրդական մասսաներին ճնշող և շահագործող տիրող շրջանների չարաշահությունները և բռնությունները, հարկերի և այլ պարտավորությունների գործում արմատացած ապօրինությունները, երկրում ստեղծված անապահովությունը, թալանն ու կողոպուտը, ենիչերիական բանակի և այլ զորամասերի սանձարձակությունները։

«Ռիսալեն» կազմված է զեկուցման ձևով։ Կոչի Բեյը քննության է առել այն բոլոր հարցերը, որոնք իր կարծիքով հանդիսանում են երբեմնի հզոր օսմանյան պետության քայքայման ու անկման պատճառները։

Չնայած Կոչի Բեյը չի կարողացել տալ կայսրության քայքայման իսկական պատճառները, այնուամենայնիվ, նրա հաղորդած տեղեկությունները իրենցից ներկայացնում են պատմական որոշակի արժեք։ Վ. Դ. Սմիրնովը Կոչի Բեյի «Ռիսալե»-ի մասին գրում է. «Նրանում, ինչպես մի ֆոկուսում, հավաքված են Թուրքիայի անկման պատճառները և նրա հզորության մասին այն մտքերը, որոնք ցրված են նրա ժամանակակիցների աշխատությունների մեջ... Նկատի ունենալով Կոչի Բեյի աշխատության անկասկած արժանիքները... ես որոշեցի նրան առաջին տեղը տալ Թուրքիայի պատմության և Թուրքական ցեղի պետական-հասարակական կյանքի գրականության իմ ուսումնասիրության մեջ»*։ Կոչի Բեյի «Ռիսալեն», որպես XVII դարի պատմական աշխատություն, իր նշանակությունը պահպանել է մինչև մեր օրերը։

«Ռիսալե»-ի 17 գլուխներում Կոչի Բեյը մեծ հմտությամբ և պարզությամբ քննության է առել Թուրքիայի պետական, հասարակական, վարչական և տնտեսական կյանքի բոլոր բնագավառները, քննադատության ենթարկել երկիրը դեպի քայքայում և անկում տանող երևույթները։ Այդ բազմաթիվ հարցերը վերաբերում են սուլթանների, վեզիրների, պետական խորհրդի անդամների բնութագրությանը, մեծ և փոքր ագարակատերերի պետական ծառայությանը, նրանց կարգապահությանը, պետությունից ռոճիկ ստացողների թվի անընդհատ աճմանը, ենիչերիական օջախի քայքայմանը, աղքատ ռայաներից գանձվող հարկերի ավելացմանը, իսլամական երկրներում[2] առաջացած ապստամբություններին և այլն։

Ինչպես տեսնում ենք, XVII դարի պատմաբան-քննադատը ուշադրության է առել պետական կյանքի, ժողովրդի և «աղքատ-ռայաների» առօրյա կյանքի հետ կապված բազմաթիվ հարցեր, փորձել է երևան հանել չարիքի արմատը և ներկայացնել պետության ղեկավարների, գլխավորապես ռազմա-ֆեոդալական ռեժիմի գլուխ կանգնած սուլթանի ուշադրությանը։

Պարզ է, որ քննադատի բոլոր անկեղծ ջանքերն ապարդյուն են անցել։ Կոչի Բեյը իր պատմական արժեքավոր երկով՝ «Ռիսալե»-ով, Թուրքիայի պատմագրության մեջ գրավում է իր պատվավոր տեղը։

---

* В. Д. Смирнов, նշվ. աշխ., էջ 33—37։